ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2024թ. №459

ՄԱՐԻՆԵ ՎԱՆԻՉԿԱՅԻ ԿՈՄԻՆՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Մարինե Վանիչկայի Կոմինյանի դիմումը և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 26-ի թիվ 7 արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Մարինե Վանիչկայի Կոմինյանին տրամադրել թիվ ԼԴ4/0025/01/23 քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի նոյեմբերի 2-ի դատավճռով Սպիտակի համայնքապետարանի տնօրինությանը հանձնված, Գոգարան բնակավայրի 7-րդ փողոց 1-ին փակուղի 13 տան նկուղում պահվող փայտանյութը՝ որպես վառելափայտ:

2. Գոգարան բնակավայրի վարչական ղեկավար Վալոդյա Հալաջյանին՝ ապահովել փայտանյութի հանձնման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. ապրիլի 30
ք. Սպիտակ